ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 07 >> դեկտեմբերի 2012թ. N 95 - Ա

ք. Արմավիր

## ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 159-րդ, 161-րդ և 164-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Կարինե Դանիելյանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը.

կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Կարինե Դանիելյանին տրամադրել 2012 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները՝ 2012 թվականի դեկտեմբերի 26-ից 2013 թվականի փետրվարի 6-ը ներառյալ՝ 24 աշխատանքային (20 նվազագույն, 4 լրացուցիչ), 7 տոնական և 1 հիշատակի օր տևողությամբ:
2. Կարինե Դանիելյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ Համլետ Կուրղինյանին:
3. Կարինե Դանիելյանին աշխատանքի մեջ համարել 2013 թվականի փետրվարի 7-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2012 թվականի դեկտեմբերի 21-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ